№ 89 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈ 1888 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 9 № 89

ՏԱՍՆ ԵՒ Վ.ԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Ցայտարարութիւնների համար վճարում են
Իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գրական ակնարկներ. Նամակ Նոր-Բայազէտից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Անձնասպանութեան վիճակագրութիւնը Ֆրանսիայում. Քաղուածքներ «Արևելք» լրագրից. Նամակ Թիւրքիայից. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԲՈՐՍԱ. — ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ

Ստացանք և կարդացինք Պետերբուրգում հրատարակվող «Արաքս» պատկերազարդ հանդիսի երկրորդ գիրքը։

Այժմ արդէն կարելի է որոշ կարծիք յայտնել այդ հրատարակութեան մասին,—ահա այն միտքը, որ անմիջապէս յղացաւ մեր մէջ այդ բաւական հաստ, 294 երեսից բաղկացած գիրքը կարդալուց յետոյ։ Մենք աւելորդ չենք համարում զբաղեցնել «Մշակի» մի քանի էջերը այդ հանդիսի մասին մի որոշ կարծիք յայտնելու համար, և այդ ոչ թէ այն պատճառով, որ «Արաքսը» մի առանձին բան է ներկայացնում. ոչ, այլ այն պատճառով, որ ամսագրական հարցը այժմ մեր մամուլի ուշադրութեան արժանացած ամենակարևոր հարցերից մէկն է, և նրա գոյութեան խնդիրը կարևոր խնդիր է։ Մեր լրագիրները արդէն հաղորդել են, որ մի քանի անձինք մտադրութիւն ունեն ամսագիր հրատարակելու։ Բաբեան աղգանունով մի երիտասարդ պատրաստվում էր հրատարակելու «Միտք» անունով մի ամսագիր, բայց այդ նրան չաջողվեց մինչև այժմ։ Պ. Արասխանեանց կառավարութիւնից թոյլտուութեան է սպասում Թիֆլիսում «Մուրճ» անունով մի քաղաքական-գրական ամսագիր հրատարակելու։ Իսկ «Արաքսի» հրատարակիչը յայտնում է, որ մտադրութիւն ունի ամսական դարձնելու այդ հանդէսը, «եթէ բաժանորդների թիւը աւելանայ»։ Զը խօսելով այն ամսագիրների մասին, որոնք գոյութիւն չունեն, տեսնենք ինչ է «Արաքսը» և ինչպիսի ամսագիր դառնալու յոյսեր է տալիս, եթէ մինչև անգամ ենթադրենք, որ ամսագրական ասպարիզի վրա ուրիշ մրցող չունենալով, նա կարող կը լինի «բաւականաչափ բաժանորդներ ունենալ» (որ մեր պարբերական հրատարակութիւններից շատերի ամենամեծ իդէալն է) և չը մեռնել։

Դիմենք ուղղակի բովանդակութեանը։ «Արաքսի» առաջին գրքի մասին մեր գրած քննադատութեան մէջ (տես «Մշակ» № 141 1887 թ.) ասել էինք հետևեալը. «Այդ հանդէսը իսկապէս զանազան յօդուածների մի հաւաքածու է, և չունի այն յատկութիւնը, որը տալիս է իւրաքանչիւր պարբերական հրատարակութեան ժամանակակից թարմ կերպարանք և այլն»։ Նոյնը կարելի է ասել երկրորդ գրքի մասին, դուցէ միայն այն տարբերութեամբ, որ երկրորդ գիրքը աւելի հետաքրքրական է երևում այն պատճառով, որ պարունակում է իր մէջ Բաֆֆիի, Ծերենցի, Խրիմեանի և մի քանի ուրիշների պատկերները և կենսագրութիւնները, որոնք այսպէս ասած, ժամանակակից հետաքրքրութիւն ունեն։ Այս երկրորդ գրքի մէջ էլ, ինչպէս և առաջինի մէջ, չը կայ յօդուածների որոշ դասաւորութիւն, չը կան բաժիններ, և հէնց այդ բանը արդէն ապացուցանում է թէ որքան զուրկ է նա նախամտածած պրօգրամայից։

Պէտք է ասել, որ «Արաքսի» այս երկրորդ գրքի յօդուածների մէջ ամենից վատ տպաւորութիւնը թողնում են այն յօդուածները, որոնք այսպէս ասած, ղեկավարող, առաջնորդող բնաւորութիւն ունեն։ Այդպիսի յօդուածներից կարելի է համարել՝ առաջին կամ աւելի լաւ է ասել առաջնորդող յօդուածը, որը կրում է «Ցանկահայաստանի ուսումնասիրութեան առիթով» (միշտ առիթով) վերնագիրը և «Ցնտեսական խորհրդածութիւններ» յօդուածը։ Մենք ուշադրութեամբ թերթեցինք առաջին յօդուածը և կարծում ենք, որ դէթ այդ երկրորդ գրքում այդ կարևոր հարցի, այն է Թիւրքաց Հայաստանի ուսումնասիրութեան հարցի մասին, մի նոր բան, մի նոր խօսք կը գտնենք։ Բայց խոստովանվում ենք, որ յօդուածի կարդալուց յետոյ անկարելի է չը ժպտալ։ Կրկնելով այն սովորական խօսքը, որ պէտք է ուսումնասիրել, (դա նոր բան չէ) ապա մի քանի բէկլամներ անելով «Արաքսի» գործունէութեան մասին, (դա էլ սովորական է), դրանից յետոյ էլ նկատելով, որ մինչև այժմ կատարված փորձերը՝ ուսումնասիրութեան նպատակով՝ թերի են և մի առանձին բան չեն ներկայացնում (սովորական դժգոհութիւն) յօդուածագիրը վերջապէս սկսում է յայտնել իր գաղափարները, ասելով որ այդ ուսումնասիրութեան գործի համար հարկաւոր է մի պատկառելի ոյժ։

Եւ գիտէք, ընթերցող, ինչ ոյժ է այդ, գիտէք ինչ միջոց է առաջարկում յօդուածագիրը այդքան աղմկալի առաջարանից յետոյ.—նա առաջարկում է մի ընկերութիւն կազմել. այդ ընկերութիւնը պէտք է ունենայ ծրագիր, վերջապէս ընկերութեանը նիւթական միջոցներ տալու համար առաջարկում է կազմել երեկոյթներ, հաւաքել նուիրատուութիւններ և այլն և այլն։ Զարմանալի բան է. միշտ ընկերութիւններ. «Արաքսը» իր անցեալ համարում Թիւրքաց Հայաստանը երևակայում էր երջանիկ դրախտ դարձնել մի ընկերութիւն հիմնելով, այժմ էլ նոյն Հայաստանը ուսումնասիրելու գործը գլուխ բերելու համար առաջարկում է մի ուրիշ ընկերութիւն հիմնել։ Ընկերութիւն հիմնելու հիւանդութիւն ունի այդ նոր հանդէսը։ Երկրորդ յօդուածի մէջ, որ կրում է «Ցնտեսական խորհրդածութիւններ» վերնագիրը և որը կրկնում է այն արդէն ծամածած միտքը, թէ հայերը առևտրական-արդիւնաբերական ասպարիզում չեն կարողանում մրցել օտարների հետ, թէ օտարները, ինչպէս մի Նօբել և այլն, իրանց ձեռքն են առել նաթի ամբողջ արդիւնաբերութիւնը,—իսկ այդ բանը Բագուի բոլոր գործակատարները մեր լրագիրներից վաղուց անգիր են սերտել,—առաջարկում է էլի ընկերութիւն կազմել. ընկերութիւն կազմելու մասին է խօսվում և մի ուրիշ՝ մի քանի լաւ մտքեր պարունակող յօդուածում, որը վերաբերում է պ. Խալաթեանի «Ծրագիր հայ ազգագրութեան» գրքին։

Գոնէ «Արաքսի» յօդուածագիրները մի յօդուած գրէին և ցոյց տային թէ ինչ առաւելութիւն ունի ընկերութիւնը, թէ ինչով աւելի բարձր է ընկերութեան գործունէութիւնը, ընկերութեան գաղափարը և այլն և այլն, ապա թէ ոչ դժուար թէ այդպիսի առաջարկութիւնը մի որ և է տպաւորութիւն թողնի հանդիսի փոքրաթիւ ընթերցողների վրա, որոնք անկասկած շատ լաւ տեսնում են թէ որպիսի մեռելութեան են ենթարկված մեր գոյութիւն ունեցող բազմաթիւ զանազան ընկերութիւնները թէ Թիֆլիսում, թէ գաւառներում և թէ Պօլսում։

Սակայն «այլ առակ լուաբուք»։ Թիւրքաց Հայաստանի ուսումնասիրութեան գործի մասին ճառող յօդուածագիրը մինչև անգամ ասում է, թէ ինչ պէտք է անել, որպէս զի մի այդպիսի ընկերութիւն թոյլատրվի և հաստատվի Կ. Պօլսում։ Նա առաջարկում է հետևեալը։ «Թիստ նպատակայարմար կը լինէր (եթէ) ընկերութեան վարչութեան անդամներ ընտրվէին և գործին տեղեակ (?) այնպիսի հայ պաշտօնեաներ (!!), որոնք կառավարութեան առաջ լաւ համարմունք ունեն»։ Օհհո....

Բայց այդ էլ ոչինչ։ Եթէ ինչ ինչ պատճառներով այդպիսի ընկերութիւն չը հաստատվի, այն ժամանակ,—ասում է յօդուածագիրը, աւելի դրական կը լինի, եթէ ուսումնասիրութեան գործին ձեռնարկի Կ. Պօլսի հայոց պատրիարքարանը (?)։ Պ. յօդուածագրի այդ տեսակ ծիծաղելի միամտութեանը միայն այս կարելի է պատասխանել, «ինչ էք կորցրել, ինչ էք փնտռում»։ Դա արդէն կատարեալ աբսուրդ է, որը ստիպում է «махнуть рукою» և ուրիշ ոչինչ....

Ուսումնասիրութեան հարցի առիթով մի քանի խօսք ևս։ Երկրի ուսումնասիրութեան հարցին ամսագրական յօդուածներ նուիրողները դուր են կարծում, թէ չը կան, այսպէս ասած, հում նիւթեր, որոնց վրա հիմնվելով կարելի լինէր նոյն իսկ շատ փոքր եզրակացութիւններ դուրս բերել ժողովրդի կեանքի այս կամ այն կողմի վերաբերութեամբ։ Խղճմտաւոր հետազօտողը, նոյն իսկ իր գրասենեակի մէջ նստած, կարող էր մի քանի գծեր դուրս բերել ժողովրդի կեանքի կրթական, բարոյական և այլ կողմերի մասին, հիմնվելով նոյն իսկ այն նիւթերի վրա, որ տուել են և տալիս են թէ մեր և թէ օտար գրականութեան մէջ լոյս տեսած զանազան գրուածքները։ Ասում են թէ պէտք է ուսումնասիրել դէթ Թիւրքահայերի կրթական վիճակը։ Շատ լաւ, բայց միթէ անկարելի է մի մօտաւոր գաղափար անգամ կազմել այդ ժողովրդի կրթական գրութեան մասին հէնց մինչև այժմ եղած տեղեկութիւններով։ Բարեխիղճ հետազօտողի համար դժուար չէ վերցնել նոյն իսկ Պօլսի պատրիարքարանի և Միացեալ ընկերութեան մատեաններում եղած տեղեկութիւնները, և թուերը, համեմատել այդ թուերը ժողովրդի թուի հետ, համեմատութիւններ անել, և մի ամփոփ յօդուածում դուրս բերել, թէ Թիւրքաց Հայաստանում քանի մարդու վրա է դալիս մի դպրոցը, թէ քանի մարդու վրա է դալիս մի դպրոցը, թէ գրագիտութիւնը ինչ տոկոս է կազմում և այն և այն հարցեր, որոնք ինքն ըստ ինքեան շատ նշանաւոր են։

Նոյն իսկ մեր գրականութեան մէջ կան շատ գրուածքներ ժողովրդի կեանքից, սկսած Սըրուանձտեանի աշխատութիւններից մինչև վերջին ճանապարհորդական նկատողութիւնները։ Մեր վիպական գրականութեան մէջ շատ թանդագին երեսներ կան, որոնք վերաբերում են ժողովրդի կեանքի իրաւաբանական, բարոյական, և մտաւոր կեանքին։ Օտար ճանապարհորդները շատ աշխատութիւններ են նուիրել մեր երկրին, սկսած ամենառաջիններից մինչև վերջինները, մինչև Ելիսեեվի ճանապարհորդութիւնը, Անդրկովկասի վերաբերութեամբ պետական կալուածների մինիստրութեան կարգադրութեան համաձայն արդէն բաւական «նիւթեր» լոյս տեսան, որոնց մէջ ցանկացողը կարող է ոչ պակաս տեղեկութիւններ գտնել ժողովրդի մտաւորական կեցութեան մասին, և այլն և այլն, և այդ բոլորից հմուտ հետազօտողը, էլի կրկնում ենք, կարող է մի քանի շատ նշանաւոր եզրակացութիւններ դուրս բերել, կարող է այդ հում նիւթերից մի որոշ կարծիք հետևեցնել, և այդպիսի հետազօտութիւններով կարելի է զարդարել ամեն մի ամսագրի էջերը, փոխանակ միշտ կրկնելու հէնը, արդէն շատ անդամ կրկնվածը, «թէ պէտք է ուսումնասիրել, և ուսումնասիրելու համար պէտք է մի ընկերութիւն կազմել», որովհետև այն, ինչ որ երէկ նորութիւն էր, այսօր արդէն նորութիւն չէ կարող լինել, իսկ երէկվայ մտքերը կրկնել և այսօր և վաղը, կը նշանակի առնուազն ջուր ծեծել....

Հաւատացնում ենք, որ ժամավաճառութեամբ է զբաղվում «Արաքսը» տպագրելով իր էջերում այնպիսի յօդուածներ, ինչպիսին է վերև յիշած «Ցանկաստանի ուսումնասիրութեան առիթով» և «Ցնտեսական խորհրդածութիւններ» վերնագրով յօդուածներ, թէև, անկասկած, այդ բոլորի նպատակը բարի է։

Անցնելով «Արաքսի» այն բաժնին, որ «Տեղագրական» է կոչվում, պէտք է ասենք, որ այդ բաժնի մէջ զետեղված մի քանի յօդուածները այնքան արդէն անմշակ են, ներկայացնելով խառնըն ի խուռն տեղեկութիւնների և թուերի մի ժողովածու, որ ընթերցողի յիշողութեան վրա դժուար թէ մի հետք թողնեն. այդպիսի յօդուածներ կարելի է զետեղել մի աշխարհագրութեան դասագրքի մէջ գուցէ, աշակերտներին անգիր անել տալու համար, բայց մի ամսագրի մէջ,—երբէք, այդպիսի յօդուածները նոյն իսկ «չը կարդացած մնալու» վտանգին են ենթարկվում. և դրանք իսկապէս նիւթեր են, որոնցից կարելի էր գուցէ մի «Տեղագրական» յօդուած կազմել Քարբերդի կամ Կիլիկիայի վերաբերութեամբ։

Հանդիսի մէջ տպագրված են մի քանի ոտանաւորներ՝ իբրև բանաստեղծութիւն, որոնց մէջ աջողված կարելի է համարել «Զէյթունցին»։

Բելետրիստական մասը շատ աղքատ է։ Եթէ չը հաշուենք «Լիր թագաւորը», որի մի մասը տպագրվեց հանդիսի I գրքում, որի մասին մենք արդէն մի քանի խօսք ասել ենք,—և որի վերջը տպագրված է այս գրքի մէջ, հանդիսի բելետրիստական ամբողջ բաժինը կազմում է Ցօլատոյի մի փոքրիկ վէպիկի թարգմանութիւնը, մի քանի երեսից բաղկացած։ Շատ լաւ կը լինէր, եթէ օտար գրականութիւնից յայտնի մի քանի վէպերի թարգմանութիւնը գրաւէին այդպիսի հաստ հանդէսների էջերը։

Եթէ «Արաքսի» այս վերջին համարը աւելի «թարմ» է երևում քան թէ առաջինը, դրա պատճառը այն է, որ այս համարում զետեղված են մի քանի ժամանակակից անձինքների, այն է, Խրիմեանի, Բաֆֆիի, Ծերենցի, Նկարիչ Այվազովսկու, Մակար Կաթողիկոսի, պետերբուրգաբնակ Մկրտիչ Սանասարեանի պատկերները և համառօտ կենսագրութիւնները։ Պատկերները աջողված են։

Մեր յօդուածի երկարանալու պատճառով մենք երկար կանգ չենք առնի այդ կենսագրութիւնների վրա, և առաջ չենք բերի այս կամ այն ուշադրութեան արժանի կամ վիճելի կտորները։ Խրիմեանի կենսագրութիւնը մեր ընթերցող հասարակութեանը լաւ յայտնի է դեռ այն ժամանակից, երբ Հայրիկը կաթողիկոսական թեկնածուների ցանկի մէջ մտաւ 1885 թվին։ «Արաքսի» մէջ տպված Խրիմեանի կենսագրութիւնը վերցրած է «Արևելք» լրագրից։

Ծերենցի կենսագրութիւնը, որը բաւական մանրամասն և աջող կերպով է գրված, կարող է համարվել «Արաքսի» այս տետրակի համարեա թէ ամենալաւ յօդուածը, և պատիւ է բերում գրողին՝ պ. Թ. Զաքարեանին։ Մենք ուրախութեամբ մի քանի քաղուածքներ կանէինք այդ յօդուածից, եթէ մեր յօդուածը շատ չերկարէր։ Այդ կենսագրութիւնը գրված է ոգևորված ոճով, մէջը կան մինչև անգամ մի քանի չափազանցութիւններ, բայց այդ չափազանցութիւնները կարծէք արդարացի են դառնում, քանի որ գրողի նպատակն է եղել ոգևորել, սիրտ տալ, յաւիտենակել ընթերցողին արդէն մեռած մի վիպասանի և հասարակական գործիչի անձնաւորութեամբ և գործունէութեամբ։

Աններելի է այն անհոգութիւնը, որը նկատվում է Բաֆֆիի կենսագրութեան վերաբերութեամբ։ Մենք կարծում ենք, որ հանդիսի հրատարակողը մի փոքր հեռատես պէտք է լինէր. եթէ Ծերենցին հարկաւոր էր նուիրել ամբողջ քսան երես, այն ժամանակ Բաֆֆիի մասին պէտք է գրվեր ոչ թէ միայն հինգ երես, այլ քսանից էլ շատ, մանաւանդ որ նոյն հանդիսի մէջ նկարիչ Այվազովսկու կենսագրութեանը նուիրված է ութ երես, իսկ Սանասարեանի նման մարդու նուիրված է ամբողջ ինն երես։ Այդ արդէն ցոյց է տալիս, որ հանդիսի բովանդակութիւնը կազմված է, ինչպէս ասում են՝ «ձախ ձեռքով»։

Մեռնում է Բաֆֆիի նման գրողը և գործողը, և «Արաքսի» պարտաւորութիւնն էր վերաբերվել

դէպի նրա գործունէութիւնը և անունը արժանավայել կերպով, և ոչ թէ սրան նրան ամբողջ երեսներով չողոքորթութիւններ կարդալուց յետոյ, մի քանի երես գրել Րաֆֆիի մասին, արդարացնելով իրան, թէ «Րաֆֆիի գրուածքների վրա մենք առանձնապէս կանգ կառնենք «Արաքսի» յաջորդ համարներից մէկում»։ Ե՞րբ պէտք է լոյս տեսնի այդ յաջորդ համարներից մէկը....

Եթէ յիրաւի այդ ամսագիրը ընդունակութիւն ունի հասկանալու, որ ինքը պէտք է ժամանակակից հարցերով զբաղվի, այդ դէպքում առնուազը միամտութիւն է Րաֆֆիի մասին լռել այս համարում, և յայտնել թէ այդ մասին կը խօսի յաջորդ համարներից մէկում. իսկ եթէ հանդիսի հրատարակողը կարծել է, որ շատ նիւթեր կան համարի մէջ, այդ դէպքում մենք համարձակ կարող ենք ասել նրան, որ այդ նիւթերի մեծ մասը կարելի էր դուրս դցել, առանց ոչինչ կորցնելու, և առանց մի կօպէկի վնաս տալու ընթերցողներին....

Մենք աւելի հակված ենք կարծելու, որ հանդիսի հրատարակողը դրանով ցոյց է տալիս, թէ հետևում է այն գրական «նէյնիմ» կարդացողների օրինակին, որոնք անվերջանալի յօդուածներ են գրում, գրում են, գրում, և երբ տեսնում են ոչինչ չէ դուրս գալիս և ոչինչ չեն կարողանում ասել, իսկոյն իրանց չաղակրատութիւններին հետևեալ պարբերութիւնն են աւելացնում. «այդ մասին յաջորդ համարներից մէկում կը խօսենք»։

Ի՞նչ անուն տալ դրան....

Մեր յիշած յօդուածներով և վերջանում է «Արաքսի» բովանդակութիւնը, եթէ յիշենք նոյն համարում տպած և մի քանի լուրեր, այլ և «Աղգային (?) յիշատակարան» մեծ վերնագրի տակ տպված Ծերենցի մի փոքրիկ և կիսատ նամակը, որը նա գրել է իր մահուանից առաջ, և որը թէև չէ աւարտած, և մի բան չէ բովանդակում, բայց «Արաքսի» հրատարակողը հարկաւոր է համարում հրատարակել, դուցէ կարծելով թէ որովհետև հանգուցեալ Ծերենցն է գրել, ուրեմն ինչ որ էլ լինի, կարելի է տպագրել....

(Կը շարունակվի)

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻՑ

—

Յուլիսի 24-ին

Նոր-Բայազէտը իր շրջակայ մօտ երեսուն հայաբնակ գիւղերով, այսօր աղքատութեան ճգնաժամի մէջ է գտնվում. նրանք այնպիսի աղքատութեան են ենթարկված, որ ուտելու հաց չունեն։ Գիւղացիները այս տարի ստիպված առնում են իրանց կանանց միակ անհրաժեշտ զարդը, ոսկիները և արծաթեղէնը, դուրս են բերում հրապարակ, վաճառում են, կամ գրաւ են դնում և դրանով իրանց մի քանի օրվայ պարէնը հայթայթում։

Այսպիսի տխուր հանգամանքները ունեն իրանց շատ պատճառները. այդ երեսուն գիւղերի միակ պարապմունքն է հողագործութիւնը և անասնապահութիւնը, դրանց մէջ որ և է մի արհեստ բոլորովին գոյութիւն չունի. գիւղացին հէնց որ ամառվայ մի քանի ամիսներում իր հողագործութիւնը վերջացնում է, քաշվում է իր անասունների հետ տաք գոմերում և ամբողջ ձմեռը անց է կացնում անգործութեան մէջ. ձմեռվայ նրա միակ պարապմունքն է՝ խնամել իր անասուններին, իսկ մնացած ամբողջ ժամանակը նա վատնում է առասպելական հեքեաթներ պատմելով ու լսելով։ Արանից պարզ հասկանալի է թէ ինչ մշտական թշուառութիւններով է շրջապատված այստեղի գիւղացին. տարի չէ լինում որ բերնութիւնը մի խիստ միջոցով չը պատժէ այստեղի խեղճ գիւղացուն՝ մի տարի կարկուտ, միւս տարի երաշտութիւն, մի այլ տարի հացի նուազելը։ Գիւղացին այնքան այսպիսի արկածների է ենթարկվում, նոյն իսկ մի տարում, որ միակ իր պաշարը և սերմացուն չէ կարողանում ստանալ, ուր մնաց որ իր հացահատիկների բերքով հոգայ և իր միւս անհրաժեշտ պիտոյքները, այն է՝ հարկերը, հաղնելիքը, ուտելիքը և այլն։ Երբ գիւղացին իր այս անհրաժեշտ ծախսերով, ապրում է միակ հացաբոյսի յոյսով և երբ իր սպասած բերքը չէ ստանում, նա ոչ թէ միայն աղքատանում է, այլ նրա յոյսերը փշրվում են և իր ընտանիքով նա անդունդն է գլորվում։

Եթէ այստեղի գիւղացին բացի հողագործութիւնից և անասնապահութիւնից, գիտենայ փոքր ի շատէ և արհեստ, այն ժամանակ նրա յոյսը չի լինի միակ հացաբոյսը, այլ նա այսպիսի դժուարին տարիներում գոնէ յոյս կը դնի իր արհեստի վրա և այն աստիճան թշուառութեան չի հասնի, որ ստիպված լինի իր տան ունեցածը վաճառել, սովի ճիրաններից ազատվելու համար։ Գոնէ գիւղաձին ձմեռվայ ամիսներում պարապէր՝ կտաւ կամ սրա պէս հասարակ կտորներ գործելով, որ այսպիսի նեղ միջոցում բաւականանար իր գործուածներով և ապահովէր իր անձը վաշխառուի կամ չարչիի ճիրաններից։

Եթէ նրան դժուարին է մի նոր բան ձեռնարկելը, որը չէ ժառանգել ոչ հայրերից և ոչ էլ պապերից, արդեօք գիւրին կերպով չէր կարելի ամեն մի գիւղում, մի մի հասարակական շտեմարան հիմնել, որը ոչ թէ միակ այսպիսի տարիներում ժողովրդին անելանելի կացութեան մէջ չէր թողնի, այլ մինչև անգամ շատ սովամահների կեանքը ազատած կը լինէր։

Թէև ռուս-տաճկական պատերազմից յետոյ շատ գիւղեր հիմնեցին հասարակական շտեմարաններ, բայց հէնց որ անցաւ թանգութեան տագնապը, նրա հետ ոչնչացան և հասարակական շտեմարանները, այնպէս որ այսօր այդ բաղմաթիւ գիւղերից ոչ մէկը չունի հասարակական շտեմարան։

Եթէ կալերի ժամանակ, գիւղացին իր ընտանիքի ամեն մի անդամի համար տայ միայն մի պուդ ցորեն, թէև նրանից դուրս կը գայ 7—10 պուդ ցորեն, բայց նշանակութիւն չունի այդքան ցորենը մանաւանդ առատ տարիներում, այն ինչ այդպիսով կը հիմնվեն հասարակական շտեմարաններ, որոնց գոյութեամբ ժողովուրդը յոյս կունենայ որ պահ տուած ցորեն ունի և ժողովրդի մէջ չի տիրի այն իրարանցումը, որը այսօր կատարելապէս թագաւորում է այստեղ, մանաւանդ այն դէպքում, երբ եղած ցորեններն էլ պահվում են անյայտ ձեռքերում։

Ց. Տ. Մ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեզ գրում են ԱԽԱԼՑԽԱՅԻՑ հետևեալը։ «Անցեալ յուլիս ամսի 27-ին ժամանեցին Ախալցխա գեր. Մաղաքիա եպիսկոպոս Օրմանեան և Կ. Պոլսի յայտնի դրագէտ, պ. Մինաս Չէրազ։ Նրանք երկու օր միայն մնացին Ախալցխայում, այցելելով տեղիս հայ եկեղեցիները և դպրոցները և այստեղից գնացին Աբասթուման։ Երրորդ օրը մեկնեցան Միխայլովօ, Կ. Պոլիս ուղևորվելու համար։»

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են օգոստոսի 3-ից հետևեալը։ «Մի շաբաթ շարունակ սաստիկ շոգեր անելուց յետոյ, սոնա երեք օր է, որ եղանակը բաւական հովացաւ։»

—

Մեզ հաղորդում են ԵՐԵՒԱՆԻՑ, որ այդտեղի թեմական դպրոցի տեսչի պաշտօնի համար հրաւիրվել է Գէորգեան ճեմարանի աստուածաբանութեան ուսուցիչ Սարգիս Տէր-Գաբրիէլեան։

—

«Русск. Курьеръ» լրագրին Պետերբուրգից գրում են հետևեալը. «Պետերբուրգի իտալական դեսպանութեանը Անդրիոլիայի իտալական հպատակները մի առաջարկութիւն են ներկայացրել իտալական հիւպատոսութիւնը Թիֆլիսից Բաթում տեղափոխելու վերաբերմամբ, ուր գլխաւորապէս, կենտրոնացած է իտալական հպատակների ամբողջ առևտուրը և ուր լուրաքանչիւր տարի գալիս են իտալական բաղմաթիւ առևտրական նաւեր։ Սակայն այդ բանի համար հարկաւոր է ռուսաց կառավարութեան համաձայնութիւնը, որը, որպէս լսվում է, այդ բանի վերաբերմամբ դեռ ևս իր վճիռը չէ կայացրել և տեղեկութիւններ է հաւաքում Բաթումում ապրող իտալական հպատակների թիւ և այդ նաւահանգիստը եկող իտալական նաւերի քանակութեան մասին մի տարվայ ընթացքում»։

—

Լրագիրները հաղորդում են, որ մի քանի ծխական ուսումնարաններում վճռված է արհեստների դասատուութիւն մտցնելու փորձն անել։ Մատդրութիւն կայ իղական ուսումնարաններում ձեռագործի դասարաններ հիմնել, իսկ արական ուսումնարաններում արհեստներ աւանդել։

—

Մինչդեռ Թիֆլիսի մի քանի փողոցները, որոնք գտնվում են քաղաքի երևելի մասում, այնքան ջրում են, որ կատարելապէս ցեխ է գոյանում, քաղաքի յետընկած մասում գտնվող փողոցները ծածկված են փոշիի թանձր խաւերով, և այդ փողոցներով կառքեր անցնելիս գոյանում են փոշիի սիւներ։ Այդ դրութեան մէջ են գտնվում մանաւանդ Թիֆլիսի Հալաբար կոչված թաղի փողոցները, որոնք ոչ մաքրվում են և ոչ էլ երբէք ջրվում, չը նայելով որ այդ տեղով էլ է անցկացրած ջրանցքը և փողոցները ջրելու մեծ յարմարութիւն ունի։ Ուրեմն ինչքան անտանելի պէտք է լինի քաղաքի այդ անուշադիր թողած մասի բնակիչների դրութիւնը, որոնք ամառները քաղաքից չեն հեռանում չքաւորութեան պատճառով։ Ցիշեալ քաղաքամասի փողոցներում այնքան մեծ քանակութեամբ է կիտված փոշին, որ քամի եղած ժամանակ բնակարանները բոլորովին ծածկվում են փոշիի ամպերի մէջ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆՁՆԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

—

Յուլիս ամիսը, ինչպէս ցոյց են տալիս վիճակագրական տեղեկութիւնները, ամենահարուստն է անձնասպանութեան կողմից։ Եւրոպական զանազան երկիրների համար հաւաքած տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ տարվայ մէջ կատարված անձնասպանութեան ամենամեծ տոկոսը յուլիս ամսի վրա է գալիս։ Այս կարևոր հարցի մասին վիճակագրական տեղեկութիւններ վաղուց արդէն Անգլիայում հաւաքվում են, և մենք արդէն առիթ ենք ունեցել մի քանի տեղեկութիւններ հաղորդելու դորա մասին։ Վաղուց է արդէն, որ դորա մասին տեղեկութիւններ է հաւաքում և Ֆրանսիական կառավարութիւնը։ Նորերս հրատարակած վիճակագրական տեղեկութիւններից երևում է, որ անցեալ 1887 թվին տեղի է ունեցել հետևեալը Ֆրանսիայում։ Անձնասպանութեան դէպքերի թիւը եղել է 7,572։ Այդքան ինքնասպանութիւնից ձմեռվայ ամիսների վրա ամենաքիչ տոկոս է գալիս. յուլիսին եղել է 790 անձնասպանութիւն, իսկ միւս ամիսներին՝ միջին թւով 550—650։ Ինչպէս երևում է, մայիսը, բնութեան կենդանանալու այդ փառաւոր ամսին, և յուլիսը, որը համարվում է տարվայ ամենագեղեցիկ ամիսը,—ծանր ներգործութիւն են ունենում մարդկային կենցաղավարութեան այժմեան պայմաններում ճնշվող մարդու հոգեկան դրութեան վրա, ու այդ պատճառով նա դիմում է անձնասպանութեան, թէև, ըստ երևոյթին, ձմեռվայ ամիսներին պէտք է լինէին անձնասպանութեան ամենաշատ դէպքեր, քանի որ աղքատների համար ձմեռը տարվայ ամենաանտանելի եղանակն է.... բայց, ինչպէս երևում է, չքաւորութիւնը և աղքատութիւնը չէ դէպի անձնասպանութիւն դրդող գլխաւոր պատճառը.... Երկու սեռերի մէջ անձնասպանութիւնը հաւասար չէ. կանայք անհամեմատ քիչ են անձնասպանութեան դիմում. յիշեալ 7572 անձասպաններից միմիայն 1,608-ը կանայք են եղել, մնացած 5,964 եղել են տղամարդիկ։

Ֆրանսիայում, հասակի տեսակէտից, անձնասպանութեան ամենամեծ տոկոսը ընկնում է 50—60 տարեկան մարդոց վրա. 30—40 տարեկան հասակում աւելի քիչ է պատահում, իսկ զառամեալ հասակում, այն է 80 տարեկանից վեր, անձնասպանութեան դէպքեր շատ քիչ են լինում։ 16 տարեկանից փոքր պատանիների մէջ անձնասպանութեան դէպքեր 67 հատ է եղել. 16-ից մինչև 21 տարեկան հասակում անձնասպանութեան դէպքեր եղել են 331 հատ։

Բաժանելով անձնասպանութեան այդքան դէպքերը իրանց պատճառների վրա, վիճակագրութիւնը հետևեալն է հաղորդում. «աղքատութեան, դրամական նեղ դրութեան և պաշտօնից զրկվելու պատճառով անձնասպանութեան 888 դէպքեր են եղել։ Ընտանեկան տարաձայնութիւնների և վրէժների պատճառով եղել է 1,031 անձնասպանութիւն։ Անբաղդ սիրոյ պատճառով—200 անձնասպանութիւն։ Արբեցողութեան պատճառով—809. դատաստանական պատժից խոյս տալու պատճառով—202. զինուորական ուղղիչ պատժից խոյս տալու պատճառով—16. զինուորական ծառայութիւնից խոյս տալու պատճառով—25. կեանքից ձանձրացած լինելու պատճառով—287. ֆիզիքական տանջանքներից խոյս տալու ցանկութիւնից անձնասպանութեան դէպք եղել է 1,228 անգամ։ Խելագարութիւնից և ուղեղի ուրիշ հիւանդութիւնից եղել է 2,168 անձնասպանութեան դէպք։

Ֆրանսիայում, ինչպէս երևում է մանրամասնութիւններից, անձնասպանները ամենից շատ գործ են դրել թոկ, երբ կամեցել են իրանց սպանել. 3,303 մարդ իրանց թոկով են սպանել. մնացածներից ամենաշատը, այն է 2,069 հոգի ջուրն են նետվել. 906 հոգի իրանց սպանել են հրազէնքով. 194 հոգի իրանց սպանել են դաշոյնով. 146 հոգի թունաւորվել են. 219 հոգի իրանց նետել են ահագին բարձրութիւնից, 78 հոգի նետվել են երկաթուղու գնացքի տակը։

Այդքան բազմաթիւ անձնասպանների օգնութիւն ցոյց տալու համար, օրինակ, Լօնդոնում հրատարակված են զանազան կառավարչական կարգադրութիւններ և շրջաբերականներ, որոնք ուղղված են ոստիկանութեան, հիւրանոցի տէրերին և կահաւորված սենեակների կառավարիչներին, որոնցով նոքա բոլորն էլ հրաւիրվում են՝ ունենալ հարկաւոր պարագաները և միջոցները անձնասպանութեան զիմողներին բժշկական և ուրիշ տեսակ օգնութիւն ցոյց տալու համար։

Սակայն, մթթէ յիրաւի դրանով կարելի է փոքրացնել անձնասպանութեան այդ ահագին պրոցէնտը։ Դժուար։ Դրա առաջն առնելու համար պէտք է վերացնել այն պատճառները, որոնք ստիպում են մարդուն դիմել անձնասպանութեան սարսափելի մտքին։

ՔԱՂՈՒԱԾՆԵՐ «ԱՐԵՒԵԼՔ» ԼՐԱԳՐԻՑ

—

Յուլիսի 24-ի տեղատարափ անձրևը բաւական վնասներ պատճառեց ի Գուդկունճուք, ճամբայներուն յոռի վիճակին պատճառաւ։ Ջուրը կոխելով Բոլիչա Եանի անուն նպարավաճառի մը խանութը, ողողեց ապրանքներն ու 3,000 օխա ձէթ, և 300 ոսկիէն աւելի վնաս պատճառեց. Տղրամաճը Նշանի և Այշըճը Աբգարի խանութներն ևս ողողուելով բաւական վնասուեցան. ս. Լուսաւորիչ եկեղեցւոյն առջև ջուրն յառաջանալով մինչև բանկան և անկից անդին Տաճարին դուռը, բաղմաթիւ արք, կանայք և տղայք եկեղեցւոյն մէջ բանտարկեալ մնացին։ Ջուրը կոխեց նաև Տոքթ. Վահան պէյի ծովեզերեայ տունը։

Ինչպէս ըսինք, այս վնասուց պատճառն է Գուդկունճուքի ճամբայներուն յոռի վիճակը։ Գուդկունճուքի հասարակութիւնը բազմիցս աղերսագրեր տուած է Գուդկունճուքէն Իճատիէ ճամբայներու և ստորերկեայ ականներու շինութեան համար, սակայն այդ աղերսագրեր անգործադրելի մնացած են։ Վերջերս դարձեալ կրկին աղերսագրեր մատուցուած են մեծ եպարքոսին և քաղաքապետութեան, և կը յուսանք թէ այս անգամ հարկ եղած հրամանը կը տրուի ում որ անկ է։ Քաղաքապետութիւնն արդէն Գուդկունճուքի մեծ հրդեհէն յետոյ գետիններէն հարիւրին տասնհինգ տեղ առած էր ճամբայները լայնցնելու և աւելորդ տեղերը վաճառելով ճամբայները և ականները շինելու համար, և այդ գումարէն 1,000 ոսկիէն աւելի ստակ առած է. միւս կողմէ, Գուդկունճուքի երեք հասարակութիւններն, հայ, յոյն և հրէայ, խոստացած են հինգհարիւրական ոսկի վճարել եթէ շինութեանց ձեռնարկուի։

Զինուորական քննիչ յանձնաժողովն որում մատուցուած էր Հիտայէդ փաշայի կողմէ պատրաստեալ ծրագիրն ի մասին շինութեան ասիական երկաթուղեայ, սկզբամբ նպաստաւոր կերևի այնըմ։ Սոյն ծրագրի ընդունելութեան և գործադրութեան ոյժ կուտայ Վ. սեմ. Սարգիս պէյ Պալեան։ Ինչպէս յայտնի է, այդ ծրագիր կառաջարկէ երկաթուղւոյ շինութեան ձեռնարկել ներքին փոխառութեամբ մը, հողային աշխատութիւնները զինուորաց կատարել տալով։

Ինչպէս երևեցաւ երէկի և այս աւուր Պաշտօնաթերթերէն, կայսերական հրամանաւ Եվմտական առաժամեայ նախարար անուանուած է Վ. սեմ. Ցակոբ փաշա, փոխանակ Վ. սեմ. Մահմուտ փաշայի և նոյն նախարարութեան խորհրդական անուանուած է Վ. սեմ. Աքիֆ էֆէնտի՝ փոխանակ Վ. սեմ. Միքայէլ էֆէնտիի։

«Սդամպուլ» ծանուցանելով Մահմուտ փաշայի հրաժարեցումն, կըսէ որ թէև ադոր բուն պատճառն յայտնի չէ, սակայն եթէ Ն. Վ. սեմութեան պաշտօնավարութեան մասին պատմուածներուն մէկ քառորդը միայն ճշմարիտ է, Մալիյէին հետ գործ ունեցող անձանց ոչ մին պիտի դարմանայ այս փոփոխութեան վրա։

«Լ. Հէրըլտ» ևս կըսէ թէ կը խորհուի Եվմտական նախարար անուանել Հանրօգուտ շինութեանց նախարար Վ. սեմ. Զիհնի փաշան։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻԱՑԻՑ

—

Կ. Պոլիս, 26 յուլիսի

Երէկ «Արևելք» երկու տողով կը հրատարակէր լուր մը որ իւր կարճութեան մէջ վերին աստիճանի կարևորութիւն ունի մեզ ամենուս համար, «Արևելք» կը հաղորդէր թէ՝ Դատական Նախարարութիւնը խրկած է Պատրիարքարան Թեղերէ մը որով բացատրութիւններ կուզէ Սահմանադրութեան գործադրման ինչ ինչ պարագայներու վրայ։ Լրագիրն ասկէ աւելի բան մը չուզեր ըսել, բայց այս տողերն իսկ բաւական էին ազգը վրդովելու, իսկ այս Թեղերէի պարունակութեան մասին մեր ստացած մասնաւոր տեղեկութիւններն զորս լաւ մը ստուգելու պէտք ունենք դեռ, աւելի ծանրակշիռ են։ Կառավարութիւնը կը յանձնարարէ այդ Թեղերէով յուսադրել Պատրիարքի ընտրութիւնը մինչև որ Պատրիարքարանի կողմանէ գոհացուցիչ տեղեկութիւններ տրուին Սահմանադրութեան ճշտիւ գործադրութեան մասին։—Պետական հարուածի մը նախապատրաստն է։—Պետական հարուած ըսելով մենք կըմբռնենք կառավարութեան ձեռնարկը մեր Սահմանադրութիւնը դադրեցնելու, ջնջելու, կամ հակառակ օրինաց մեր գործերուն միջամտութիւնը։ Պետական հարուածն ասկէ 22 տարի առաջ 1866-ին տեղի ունեցաւ, Սահմանադրութիւնը դադարեցաւ և կառավարութեան կողմանէ ընտրուած ժողով մը կառավարեց ազգը մինչև որ Օտեանի նման անձանց միջամտութեամբ վերստին Սահմանադրութիւնը գործադրելի եղաւ։ 1866-ին հայերն էին որը կառավարութեան միջամտութիւնը խնդրելով Սահմանադրութիւնը դադրեցուցին, այժմ տարակոյս չը կայ թէ դարձեալ հայերն են այդ փորձերն ընողները. կառավարութիւնը ինքնաբերաբար չընէր այսպիսի ձեռնարկներ։

Եւ ինչու այս Պետական հարուածի նախապատրաստը։—Վասն զի յուլիս 22-ի ուրբաթ օրը Պատրիարքական ընտրութիւն չը կատարեցաւ և քուէներու տուփին չելաւ Բարթողիմէոս եպիսկոպոսի անունը։ Որովհետև այդ օրն ընտրութիւն չը կատարեցաւ, հետևաբար յայտնի կերևէր թէ դժուարաւ Բարթողիմէոս եպիսկոպոս պիտի ընտրուէր, ուրեմն հարկ էր ո՛ և է պատրուակաւ արգելք լինել ուրիշի մը ընտրութեան, կամ սպառնալով դադրեցնել Սահմանադրութիւնը բռնի կերպով Բարթողիմէոս եպիսկոպոսն ընտրել տալ։ Ահա վտանգը, բայց միանգամայն ահա Սահմանադրութեան ընծայած բարիքները. Սահմանադրութիւնը կրնայ շատ թերութիւններ ունենալ, Սահմանադրութիւնը կրնայ յոռի կերպով գործադրուիլ, բայց ազգը երբ որ ուզէ, իւր կամքը կատարել կուտայ չնորհիւ Սահմանադրութեան։ Ազգը Խրիմեանն ընտրեց Պատրիարք, ազգը Նէրսէսն ընտրեց Պատրիարք,—և տասը տարիէն աւելի նորա նեցուկն եղաւ Ազգ. Ժողովն հակառակ ամէն նենգութեանց, ազգը ուզեց—դայս խոստովանելու է—Ցարութիւն Պատրիարքը և Ցարութիւն Պատրիարք ընտրուեցաւ։ Այժմ ազգը չուզեր Բարթողիմէոս եպիսկոպոսը. ի զուր Թիւրքիոյ հայ եկեղեցականութիւնը գնա մատնանիշ կընէ իբր Պատրիարք, դասելով զնա առաջինն իւր ընտրելեաց մէջ, ի զուր Ազգային իշխանութիւնը գերմարդկային ճիգեր կընէ Բարթողիմէոսի յաջողութեան համար, ի զուր Պոլսոյ օտար թերթերն, մանաւանդ թիւրք թերթերն կը պահանջեն Բարթողիմէոս եպիսկոպոսն, ի զուր մեր հայ պետական անձինք յանուն նախարարաց կը պահանջեն Բարթողիմէոսն, ազգը չը խռովիր, չը յուզիր, այլ իւր Ոչը կըսէ պարզապէս իւր պատգամաւորներու ձեռամբ։ Եւ երբ ակներև կըլլայ թէ ո՛ և է ճնշմամբ—ճնշումն օրինաւորութեան սահմանին մէջն է տակաւին—կարելի չը պիտի լինի Թիւրքիոյ մէջ ալ հայ ազգին ատելի անձ մը հայ ազգին Պատրիարք ընծայել, այն ատեն «դիմենք ապօրինաւորութեան, կը գոչեն, բաւական է յաջողինք։»—Ցեսան անցեալ անգամ թէ ազգին նորընտիր երեսփոխաններու ստուար մեծամասնութեամբ ընտիր անձեր էին ազգին կամացն թարգման հանդիսացող. բայց տակաւին կան երեսունի չափ թափուր աթոռներ, պէտք է սոցա աթոռակալներն ալ որոշել. երեսուն նոր երեսփոխաններ նոր և մեծ ոյժ մը պիտի տան հակաբարթող. կուսակցութեան, ուրեմն փութալու է դէթ այդ վտանգին առաջն առնուլ։

Ցանուն Ներքին կանոնագրի է որ յարձակումն սկսած է։ Ազգ. Ժողովն ունի իւր Ներքին կանոնագիրն տասը տարիէ ի վեր, այդ կանոնագրով բաւական կերպով դիւրացած են Ժողովին գործելու եղանակներն, սակայն մի քանի երեսփոխանք իրենց նպաստաւոր չեն գտներ այդ կանոնագիրն և ատոր դէմ կը պատերազմեն, այժմ տեսնելով թէ չեն կարող յաղթանակել, կառավարութիւնն ալ իրենց հետ կուգէն առնել, և կառավարութեան գլխաւոր պահանջը Կանոնագրին վրայ է։—կը տեսնենք թէ խնդիրն ինչ կերպարանք պիտի առնու և ըստ այնմ կը գրենք, աւելի ընդարձակ տեղեկութիւններ տալով այդ Ներքին կանոնագրի մասին և Սահմանադրութեան հետ ունեցած վերաբերութեանց։ Դատական գործոց նախարարութեան Թեղերէն ուղղակի այդ Ներքին կանոնագրին կը վերաբերի։—«Ինչպէս կը գործադրէք կանոնագիր մը զոր կառավարութիւնը չէ վաւերացուցած, կըսէ Թեղերէն։» Բայց այս պահանջումն հիմնաւոր չէ։ Ներքին կանոնագիրն յարաբերութիւն չունի կառավարութեան հետ։

Հայկակ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Թաւրիզ, 22 յուլիսի

Եթէ Բաֆֆիի մահը ցնցում պատճառեց բոլոր հայ քաղաքներին, ևս առաւել այդ կորուստը զդալի պիտի լինէր Թաւրիզի համար, ուր հանգուցեալը մի քանի տարիներ վարել է ուսուցչի պաշտօնը, որտեղ ամենից շատ նա ենթարկվել է հալածանքի, անցրել է դառն օրեր, որտեղ մինչև այժմ ևս նա ունեցել է և ունի անձնական շատ բարեկամներ և հակառակորդներ։ Կարդալով լրագիրներում եղած վառաւոր թաղումը, Թաւրիզեցի հայն զարմանքից ապշում էր, լսելով որ «մերոյս Ցակոբը», «մեր վարժապետը» այնպիսի մեծ մարդ է եղել։ Սակայն մեծ եղաւ իմ զարմանքս, երբ հասնելով Թաւրիզ իմացայ, որ Բաֆֆիի համար հոգեհանգիստ չէ կատարվել, մինչ սպասելի էր, որ Թաւրիզը առաջինը կը լինի կատարող։ Զարմանքս կրկնապատկվեցաւ, երբ իմացայ որ տեղիս առաջնորդի նախաձեռնութեամբ չքեղ հոգեհանգիստ է կատարվել ճառախօսութեամբ հանդերձ հանգուցեալ Ցովհաննէսեանի համար, որովհետև նա նուիրել է Թաւրիզի հայերին 2000 ռուբլու արժողութեամբ մի տպարանական մամուլ։ Այս իրողութիւնը խիստ խրատական է. ազգային մի ընդհանուր և անզուգական բանաստեղծ 2000 ռուբլու արժողութիւն չէ ներկայացնում իր գրուածներով և նրան զլացվում է հոգեհանգիստ.... Ի հարկէ, մենք իրաւունք չունենք պահանջելու առաջնորդից և հոգևորականութիւնից այդ տեղ երևոյթի համար բացատրութիւն, չէ որ հոգեհանգիստ կատարելը նրանց համար լոկ զրամի խնդիր է. հաշիւը շատ պարզ է. հարուստ Ցովհաննէսեանի ժառանգները լսելով, որ հեռաւոր Թաւրիզում կատարվել է հոգեհանգիստ, կուզարկեն մի քանի դեղին ոսկիներ, իսկ Բաֆֆիի հոգեհանգստի համար մի քանի զուռներ ոմ պիտի վճարէր.... Բայց մենք իրաւունք ունենք պահանջելու այն պարոններից, որոնք քաղաքում ազգային գործերի ղեկավարներն են և որոնք դրամական որ և է չահ չունենալով հանդերձ, իրանք ևս Բաֆֆիի նշանակութիւնը զնահատողներից են, այն է յարգելի հոգաբարձուները. նրանք չեն կարող արդարանալ նրանով, որ առաջնորդը չը կամեցաւ, նախաձեռնութիւն ցոյց չը տուեց։ Առաջնորդը պարտաւոր էլ չէր. գուցէ և նա այնպիսիներից է, որոնց համար մի հասարակ վաճառական, օրինակ, Բաղալ Արզումանեան, որի համար նոյնպէս հոգեհանգիստ է կատարել, աւելի նշանակութիւն ունեն, քան ամենասիրելի զրողը. այդ տեսակ պարագաներում այդ տեսակ առաջնորդներին պէտք է ցոյց տալ, որ ազգի համար յետին զրողը, յետին ուսուցիչը, յետին խմբագիրը աւելի մեծ նշանակութիւն ունի, քան հարուստ մեծատունը։ Ցուսանք դէթ, որ Թաւրիզի հայ հասարակութիւնը չի զլանայ իր լուման ևս ձգելու այն դանձանակի մէջ, որով պիտի հոգացվի հանգուցեալ վիպասանի մահարձանը։

Հ. Առաքելեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Լօնդոնի «Standard» լրագիրը ցաւում է, որ մարկիզ Սալիսբրի շատ հաստատամտութեամբ պնդում էր լորդ-մէրի մօտ իր արտասանած ճառի մէջ, որ իբր թէ Անգլիան ի սրտէ ցանկանում է որքան կարելի է շուտով թողնել Եգիպտոսը։ Լրագրի կարծիքով, այժմ այդպիսի ձգտումը քաղաքական տեսակէտից հաղիւ թէ նպատակայարմար համարվի, աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ մնացած պետութիւնները ձգտում են սպառնալի դրութիւն ձեռք բերել Միջերկրական ծովում։ Ինքն իրան հասկանալի է, որ անգլիական կառավարութեան խօսքերը, որ իբր թէ նա ցանկանում է կարճ ժամանակից յետոյ հեռանալ Եգիպտոսից, հաւած իւղի տեղ ոչ ընդունվել են և ոչ էլ կընդունվեն։

—Մայրաքաղաքի լրագիրների ստացած հեռագրից երևում է, որ գեներալ Բուլանժէ նոր անաջողութիւն է ունեցել։ Նրա Ստորին Շարանտիի դեպարտամենտի Սէն-Ժան դ'Անժէլի գլխաւոր քաղաք գալը, իր ընտրութիւնը առաջ տանելու համար, մեծ անկարգութիւններ առաջացրեց, որոնց հետևանքն էր բազմաթիւ կալանաւորութիւններ։ Ողորմելի գեներալին չաջողվեց ոչ ճառ խօսել և ոչ միտինգ կազմել, և նա առանց հետևանքի ստիպված էր փարիզ վերադառնալ։

—Իշխան Բիսմարկ չնորհաւորական հեռագիր ուղարկեց անգլիական առաջին մինիստր մարկիզ Սալիսբրիին լորդ-մէրի բանկէտում այդ վերջինի արտասանած ճառի համար։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Վիէննայում մեծ ոյժ է ստանում հակասեմիտական շարժումը. Շէնէրէրի հակասեմիտական լրագրի հետ միացան և ուրիշ օրգաններ, որոնք նպատակ են դրել ամէն միջոցներով պատերազմել հրէական արշաւանքի դէմ։ Աւստրիական կառավարութիւնը, որը ահագին դումարներ է պարտական հրէայ սեղանաւորներին, աշխատում է արգելել այդ շարժումը և մինչև անգամ կալանաւորում է նրանց, որոնք համակրութիւն են յայտնում Շէնէրէրին։ Սակայն լրագիրներում տպված ստատիստիկական տեղեկութիւնները հրէական տարրի աճման և զօրեղանալու մասին հանգստացուցիչ կերպով չեն կարող ներգործել մտքերի վրա։ Ցայտնվում է, որ 1857 թուականից Վիէննայում մէկ հրէայ գալիս էր 70 բնակիչների վրա, 1880 թվին 9 բնակիչներից մէկը հրէայ էր, իսկ այժմ 6 բնակիչներից մէկը հրէայ է։ Վաթսուն հազար վաճառականներից Վիէննայում 30 հազարը հրէաներ են, 600 փաստաբաններից 350-ից աւելին հրէաներ են, ուսանողների մէջ 56 տոկոսը հրէաներ են, իսկ միջնակարգ ուսումնարաններում հրէաները 64 պրոցէնտ են կազմում։ Ամբողջ մամուլը, բօրսան և բանկերը հրէաների ձեռքումն են։ Խոշոր արդիւնաբերութիւնը կամաց կամաց անցնում է նրանց ձեռքը։ Ահա հետևանքը այն բանի, որ Աւստրիայում հրէաների համար բաց է ամէն ասպարէզ։

* *
*

Վերջին օրերի անձրևները և փոթորիկները մեծ վնասներ հասցրին ազգաբնակութեանը Ֆրանսիայում։ Նորմանդիայի և Բրէտանի ափերի վրա բազմաթիւ ձկնորսներ իրանց նաւակներով հեղեղների զոհ դարձան։ Ֆրանսիայի շատ տեղերում փոթորիկը և կարկուտը ոչնչացրին այս տարվայ բերքը։ Ամենից շատ վնասվեցան Գարդ, Լօ, Լօ-իգարօնի և Լոզէր դեպարտամէնտները։ Սավոյում նոյնպէս տեղում էր երբեմն անձրև և երբեմն կարկուտ։ Կային տեղեր, ուր կարկտի իւրաքանչիւր հատիկը կշռում էր 80 գրամ։ Լօ դեպարտամէնտում պտղատու ծառերը փչացած են, իսկ խաղողը կատարելապէս ջարդված է։ Լոզէրում ուրագանը արմատախիլ է արել ընկուզենիները և հարիւրամեայ կաղնիները։ Անհագին քանակութեամբ կարկտահար են եղել թռչունները։ Թամբաքուն արմատահան է եղած, այնպէս որ ծխախոտի բերքի մասին չի էլ կարելի մտածել։ Ցաս և երկու դեպարտամէնտներ այդ կերպով ՀԱՍՎել են։Բայց մնացած դեպարտամէնտներում, անընդհատ անձրևային եղանակի պատճառով, կարելի է յուսալ, որ պտղաբերութիւնը չափաւոր կը լինի։ Հացի գինը արդէն բարձրացել է և կարծում են, որ ամէն տեսակ բուսական մթերքները կը թանդանան։

* *
*

Վերջին ժամանակները անգլիական Հնդկաստանի մահմեդական դաւանութեան չը պատկանող բնիկների մէջ մեծ յուզմունք է տիրում։ Բարեպաշտ ինդուսները իրանց հայրենակիցների և կրօնակիցների մէջ ստորագրութիւններ են հաւաքում Վիկտորիա թագուհի-կայսրուհուն մի խնդրագիր ներկայացնելու համար, որի մէջ խիստ կերպով բողոքում են կովեր և եզներ մորթելու դէմ, որոնց միսը, որպէս յայտնի է, մեծ քանակութեամբ սպառում են անգլիական զինուորները։ Կովը Հնդկաստանում դեռ այժմ ևս սուրբ կենդանի է համարվում և մեծ յարգանք է վայելում, որի մասին վկայում են դեռ Ռիգ-Վեդի սրբազան օրհներգութիւնները։ Բրամինները սարսափով են նայում այն բանի վրա, թէ որպէս հնդկական կայսրուհու արիւնարբու զինուորները հաղարներով են ոչնչացնում այդ սրբազան կենդանիներին։ Ցայտնի է, որ սիպայների ապստամբութեան գլխաւոր պատճառներից մէկը այն լուրն էր, որ իբր թէ տեղական զինուորներին բաժանած հրացանի փամփուշտները օծված էին կովի ճարպի և խոզի իւղի խառնուրդով պղծելու համար թէ մահմեդականներին, որոնք խոզը անմաքուր կենդանի են համարում, և թէ բրամինական կրօնի հետևողներին, որոնք կովը սուրբ կենդանի են համարում։ Լօնդոնի «Times» լրագրի խօսքերով, բրիտանական Հնդկաստանի հիւսիս-արևմտեան և կենտրօնական նահանգապետութիւններում այդ շարժումը բուն կրօնական բնաւորութիւն ունի, բայց Բենգալիայում այդ շարժումը քաղաքական բնաւորութիւն ևս ստացաւ։

* *
*

Այս օրերս ռուսաց թարգմանութեամբ հրատարակվել է Պետերբուրգում իտալացի Ֆիզիօլոգ Մանտէգացի գիրքը «Սիրոյ Ֆիզիօլոգիա» վերնագրով։ Գրքի հեղինակը, որպէս կարդում ենք մայրաքաղաքի լրագիրներում, սիրոյ աշխարհում կընոջը միշտ վեր է դասում տղամարդուց, պաշտպանելով կնոջը և կանացի զգացմունքը անարդար յարձակումներից։ Կնոջ սէրը, Մանտէգացի կարծիքով, թէ բարձր է և թէ խորն է տղամարդու սիրուց. հասարակական գործունէութեան ասպարիզում տեղ չը գտնելով իր համար, կինը համարեա իր ամբողջ ժամանակը նուիրում է իր սրտի ուսումնասիրութեանը։ «Բնութիւնը, ասում է Մանտէգացա,—կնոջը տուեց սիրոյ մեծ մասը, և եթէ կարելի լինէր այդ թւանշաններով բացատրել, ես կասէի, որ տղամարդուն բնութիւնը տուել է չորրորդ կամ մինչև անգամ միայն հինգերորդ մասը այն հողի, որ յայտնի է «Le pays du Tendre» անունով։ Տղամարդու սէրը կայծակի նման է. կը փայլատակի սպառնալի որոտմամբ և կը հանգչի. կնոջ սէրը արեգակի ճառագայթի նման է, ջերմ և խաղաղ, որը խորը թափանցում է սրտի մէջ և պտղաբերում է նրան։ Սիրած մարդու գրկից կինը անցնում է դէպի մանուկների գրկանքը, և նրա սէրը չէ յոգնում, սիրտը չէ սառչում, կիրքը չէ կարողանում տաղտկանալ։» Մանտէգացի իր գրքի գլուխներից մէկում հետևեալ անէծքն է կարդում մարդկանց գլխին. «Թող չար և ցած մարդը երբէք չը հանդիպի մի կնոջ, որը նրան կը սիրէր. թող այդպիսի մարդը վայելչութեան ծարաւը յագեցնէ միայն ամենակոպիտ բաժակից. թող տգէտը, անբարոյականը, անառակը, և բարոյական աշխարհի ամէն տեսակ հրէշը չը գտնէ ոչ մի տեղ կնոջ կուրծքը, որի վրա կարողանար հանգստացնել իր գլուխը։ Որպէս եկեղեցին մի ժամանակ յանցաւորներին մերժում էր իրանից, թող հացից և ապաստանից զրկվեն բոլոր բարոյական հրէշները։»

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ԲԵՐԼԻՆ, 5 օգոստոսի։ Ֆրանկֆուրտ Օդէրի վրա երէկ արտասանած ճառի մէջ, Վիլհելմ կայսրը ասեց էլի հետևեալը. «Բայց ես կամենում եմ կրկին մէկ բան աւելացնել, որ մենք շատ լաւ ենք ճանաչում մեզ և ես իմ հանգուցեալ ծնողին պաշտպան եմ կանգնում այն ամօթալի կասկածի դէմ, որ իբր թէ նա կարող էր հրաժարվել մեծ ժամանակի ընթացքում ձեռք բերած որ և է բանից։»

ԱԼԷՔՍԱՆԴՐԻԱ, 5 օգոստոսի։ Եգիպտոսը, Բ. Դրան յանձնարարութեամբ, բողոքեց Զուլայի վրա իտալական հովանաւորութիւն հաստատելու դէմ։

ՍԵՎԱՍՏՈՊՕԼ, 6 օգոստոսի։ Մեծ իշխան Կոնստանտին Նիկոլաևիչ առաւօտեան 4 ժամին Օրիանդայից ժամանեց և ճանապարհ ընկաւ դէպի Պետերբուրգ։

ՓԱՐԻԶ, 6 օգոստոսի։ Գործադուլ արած բանւորների ժողովում գործադուլի բիւրօի գլխաւոր քարտուղարը յայտնեց, որ գործադուլը շարունակելու համար դրամական միջոցները պակաս են և որ, ի նկատի ունենալով այս հանգամանքը, գործադուլին մասնակցողներից իւրաքանչիւրը ազատ է իր հայեցողութեան համեմատ վարվելու։ Գործադուլի գործերի համար կազմված յանձնաժողովը, քարտուղարի խօսքերով, սրանից յետոյ ևս կունենայ իր նիստերը, նախապատրաստելու աշխատանքի աւելի լաւ կազմակերպութիւնը։ Լսելով քարտուղարի յայտարարութիւնը, մեծամասնութիւնը վճռեց սկել աշխատանքը։

ԲԷԼԳՐԱԴ, 6 օգոստոսի։ Լուր է տարածվել, որ սեպտեմբերի 18-ին կը կայանայ բուլգարական անկախութեան հրատարակումը։ Այդ բանի համար որպէս վարձատրութիւն կը վճարվի Բ. Դրանը 30 միլիոն ֆրանկ։

ՓԱՐԻԶ, 8 օգոստոսի։ Ամիէնում կատարված ընտրութիւնների ժամանակ ամբողջ գիշերվայ ընթացքում շատ փոթորկալի ցոյցեր էին լինում. հետևակ զօրքը սուիններ էր գործ դնում փողոցները յուզվող ամբոխից մաքրելու համար։ Լիլլում նոյնպէս տեղի էին ունենում աղմկալի տեսարաններ Բուլանժեանների և նրանց հակառակորդների մէջ. մի քանի խմբակներ մինչև առաւօտեան 2 ժամը մնում էին մեծ հրապարակի վրա և միայն այդ ժամանակ ոստիկանութեանը աջողվեց ցրվել նրանց։ Այդ միջոցին 14 մարդիկ կալանաւորվեցան։

ՓԱՐԻԶ, 8 օգոստոսի։ Բօրսային քաղաքամասում ամբողջ գիշերվայ ընթացքում սաստիկ շարժում էր նկատվում։ «Presse» լրագրի խմբագրատան դիմաց գտնվող բուլվարի վրա կարգը վերականգնելու համար, ոստիկանութիւնը ստիպված էր ոյժի զօրութեամբ ցրվել ամբոխը։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Օգոստոսի 5-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արժէ.	102	ր.	—
Համբուրգի վրա 100 մարկ —	50	»	20
Փարիզի վրա 100 ֆրանկ —	40	»	50
Ոսկի — արժէ —	8	»	18
Մաքսային կուպոններ —	164	»	50
Արծաթ — — —	1	»	28
Բորսային դիսկոնտներ —	6%	7¼%	
Պետական. բանկ. 5% տոմս 1-ին չրջանի	98	»	62
— — — — 2-րդ —	98	»	75
— — — — 3-րդ —	98	»	37
— — — — 4-րդ —	98	»	62
— — — — 5-րդ —	98	»	50
— — — — 6-րդ —	—	»	—
Նոր 4% փոխառութիւն	82	»	50
Արևելեան 5% փոխառութ. 1-ին չրջ.	98	»	62
— — 2-րդ —	98	»	25
— — 3-րդ —	98	»	50
Ներքին 5% առաջին փոխառութ.	270	»	—
— երկրորդ —	250	»	—
5½% բէնտա	102	»	—
Ոսկեայ բէնտա	181	»	—
Եօթերորդ կոնսոլիդած փոխառութիւն	155	»	—
Նոր երկաթուղային բէնտա	99	»	25
5% գրաական թղթեր կալուած. փոխ. կրեդ. ընկ.	160	»	—
Գրաա. թղ. Ազն. բանկի	93	»	62
5½% գրաական թղթեր խերսոնի կալուած բանկի	97	»	62
6% գրաական. թղ. խարկովի կալ. բան.	101	»	50
— — Պոլտավայի — —	101	»	—
— — Պետ. Տուլսկ. — —	101	»	—
— — Կիևի — —	101	»	25
— — Մոսկվայի — —	101	»	25
— — Բեսարաբ. Տավր. —	100	»	25
— — Նիժ. Սամար. —	101	»	—
— — Վիլնայի —	100	»	75
— — Թիֆլիսի—27 և 43 տ.	98	»	—
— —Բուխարեստի-18 և 43 տ.	98	»	—
Վոլժսկо-Կամսկի բանկի ակցիաները	702	»	—
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ.	249	»	—
Ռիբինսկ-Բոլոգովի ընկ.	82	»	50
Ս. Պետերբուրգի քաղաքային օբլիգացիաներ	93	»	50
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ	94	»	37
Օդէսայի — —	93	»	62
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ.	82	»	50

Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը դանդաղ է։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ *և* ԲԱԹՈՒՄԻ *մէջ և փոխադարձ.*

Հինգշաբթի, օգոստոսի 18-*ին,* ՄԻՆԳՐԷԼԻԱ (MINGRÉLIE) *շոգենաւը, նաւապետ* ԺԻԲՈՒԷՆ (GIBOIN) *դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսոն, Կ. Պոլիս և Մարսէյլ։ Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում Լէմլոզլուի տան, Նաբերէժնայա, և Թիֆլիսում Նախկին Արծրունի գալերէում,* № 103. 2—3

Societa Generale italiana di Navigazione.

117 ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՄԵԾ ՇՈՓԵՆԱՒԵՐ ՈՒՆԵՑՈՂ

ԻՏԱԼԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

կանոնաւոր երթևեկութիւն Բաթումի և Եւրոպայի, Աֆրիկայի, Ասիայի ու Ամերիկայի բոլոր գլխաւոր նաւահանգիստների մէջ։ Շոգենաւերը Բաթումից դուրս են գալիս կանոնաւորապէս ամեն շաբաթ։

1,500 տոննա ունեցող շոգենաւերը Բաթումից դուրս են գալիս ամեն երեքշաբթի օր դէպի Անատոլիայի բոլոր գծերը և Կ. Պոլիս։

Բոլոր տեղեկութիւնների մասին (թէ ճանապարհորդների և թէ ապրանքների մասին) դիմել ընկերութեան գործակալ Ի. Է. ՉԷՐՈՒՏԻՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ—Գօլովինսկի պրոսպ. № 34 *և* ԲԱԹՈՒՄՈՒՄ—*Իշխ. Գուրիէլիի տանը։*

14—40

ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏՈՒՄ

ՍՏԵՓԱՆՈՍ ԲԱՏԻԿԻ *գրավաճառանոցում ծախվում են ի միջի այլոց* Ս. ՓԻԼՕԵԱՆԻ *հետևեալ երկերը.*

1) «ՍՕՓԵՐՔ»..... 30 կ.
2) «ԿՈՐԱԾ ՄԱՐԴԱՐԻՏ»..... 50 »
3) «ԶՐՈՅՑՆԵՐ» *բնական պատմութիւնից, պատկերազարդ*..... 30 »
4) «ԶՐՈՅՑՆԵՐ» *բնական պատմութիւնից՝ երկրորդ մաս*..... 40 »

Հասցէն այսպէս է. Ново-Баязетъ, Степану Батикъ. 2—2

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆԶԱՆՑ ՀԱՄԱՐ

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։

Աւանդելի առարկայք սոքա են՝ 1) *Առևտրական գնտեսութիւն,* 2) *Առևտրական թուաբանութիւն,* 3) *Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային),* 4) *Թուաբանութիւն համրիչի վրա,* 5) *Առևտրական թղթակցութիւն,* 6) *Առևտրական և մուրհակի կանոնադրութիւն, և* 7) *գեղագրութիւն։*

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 25-ից։ Ընդունելութիւնները սեպտեմբերի 15-ից, ամենայն օր, երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլոլակում, Լաբորատորնայա փողոցի վրա, № 11։ *Իսկ օգոստոսի 20-ից Աղէքսանդր Փրիդոնովի տանը,* № 9 *Սերգիէվսկայա և Նագորնայա փողոցների անկիւնում, դեղատան դիմաց, ուր որ անցնելու են կուրսերը։ Ծրագիրը ու կանոնները կարելի է ստանալ ՉՐԻԱՊԷՍ եղբ. Ծովիանովների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են կուրսերի հիմնողին.*—въ Тифлисъ, С. П. Мануэльянцу.

4—20 (Ե. Շ.)

Մի երիտասարդ, որ աւարտել է իր ուսումը Ներսիսեան դպրոցում և վարել է մի քանի տարի ուսուցչական պաշտօն, ցանկանում է դասեր ունենալ հայոց եկեղեցական-ծխական դպրոցներում հայոց լեզուից և առարկաներից չաբաթական 20—26 *դասով։*

Պայմանների մասին ցանկացողները թող դիմեն «Մշակի» խմբագրատուն պ. Տէր-Միքայէլեանցին։ 3—4

ԳՈՐԾԱՐԱՆ

ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ, ՄԻՆԵՐԱԼԱԿԱՆ, ՄՐԳԱՑԻՆ ԵՒ ԳԱԶԱՑԻՆ ՋՐԵՐԻ

Մ. ՄԻՀՐԱՆԵԱՆՑԻ

ԲԱԹՈՒՄՈՒՄ

(*Ցերկօվնայա փողոցում, Կոնստանտինովի տան կից, որտեղ գտնվում է Լօբկո և ընկ. տպարանը*)

Պատիւ ունեմ յայտնելու պ.պ. բժիշկներին և յարգելի հասարակութեանը որ ես նորից վերա նորոգեցի և նշանաւոր կերպով ընդարձակեցի իմ գործարանս, աշխատելով բաւականացնել ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳԻՏՈՒԹԵԱՆ *բոլոր* ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ, *ջրերի պատրաստութեան վերաբերմամբ։*

Գործարանի կառավարութիւնը ես յանձնեցի ՖԱՐՄԱՑԻԱՑԻ *մի* ՊՐՕՎԻԶՈՐԻ, *որ փորձառութիւն է ստացել Ռուսաստանի մայրաքաղաքներում։ Գործարանն ունի ամենանոր ձևի մեքենաներ, նոյնպէս և* ՉԻՎԻՆԻ *հռչակաւոր* ՖԻԼՏՐԸ, *որը միակ է, որ աջողութեամբ մաքրում է ջրերը կապարից, կրից, երկաթից, օրգանական, միներալական մասնիկներից ու աղերից և դերազանցում է բոլոր միւս ֆիլտրներից իր մեքենայական և քիմիական գործողութեամբ։*

Պրովիզորը մշտապէս գտնվում է և անձամբ պարապում է իմ գործարանում։ Շնորհով այն ժամանակ մինչև ցներին, որ տալիս է գիտութիւնը անալիտիական քիմիայի ճիւղում, այսուհետև իմ գործարանում կը պատրաստվեն, բացի զէլտէրեան, մրգային և գաղային ջրերից, բոլոր ՄԻՆԵՐԱԼԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՋՐԵՐԸ, *ինչպէս օրինակ՝ Վիշիի, Էմսի, Կարլսբադի, Մարիէնբադի ջրերը, լուծողական ջրերը բոլոր յայտնի աղբիւրների և այլն, հետևելով յայտնի հետազօտողների տուած կանոններին։ Արուեստական միներալական ջրերը, որոնք այժմ խորհուրդ են տալիս ընդունել հռչակաւոր բժիշկները, կարող են ոչ թէ միայն փոխարինել բնական ջրերին, բայց և ունեն մի քանի գերազանցութիւններ. նրանք կարող են միշտ թարմ դրութեան մէջ ձեռք բերվել, մի և նոյն ժամանակ պարունակելով իրանց մէջ ածխաթթու գազերի աւելի մեծ քանակութիւն, այդպիսով աւելի ախորժելի դառնալով խմելու համար և աւելի շուտ ներգործելով հիւանդ կաղմուածքի վրա։*

Աւելորդ չեմ համարում ասել որ ես միշտ աշխատում եմ պահել գործարանս կատարեալ մաքրութեան մէջ և վերաբերվել դէպի գործս ամենամեծ ճշգրտութեամբ և բարեխղճութեամբ, որի մասին յարգելի հասարակութիւնը կարող է համոզվել անձամբ այցելելով գործարանս ամեն ժամանակ։

Ցարաձայնութիւններից խուսափելու համար, խոնարհաբար խնդրում եմ իմ ջրերի գործածողներին պահանջել որ իմ բոլոր արդիւնքները կրեն իմ ֆիրմայի ն շ ա ն ա կ ը, *քանի որ ուրիշ գործարաններ կարող են ի չար գործածել հասարակութեան հաւատարմութիւնը։*

Մ. ՄԻՀՐԱՆԵԱՆՑ 30—50 (Ե)

Въ редакціи газеты „МШАКЪ“ продаются слѣдующія брошюры: 1) „Экономич. Положеніе Турецкихъ Армянъ“, публич. лекція Д—ра Г. Арцруни, перев. съ арм. А. Аракелянца. Цѣна 25 к. 2) Die Oekonomische Lage der Armenier in der Türkei, ein öffentl. Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von A. Amirchanjanz. Preis 25 k. 3) Die Hungersnoth in Türkisch-Armenien, ein Vortrag von Dr. Grigor Arzruni, übersetzt von Amirchanjanz. Preis 20 kop.

Иногородные, желающіе получить брошюры, благоволятъ присылать по 30 коп. почтовыми марками, за каждую брошюру.

Адресъ. Тифлисъ, Редакція „Мшакъ“, или Tiflis, Redaction „Mschak“. (Ե)

Մարմնի մասերը, մանաւանդ ոտների մատներ փտելուց պահպանող փոշի

ԳԱԼՄԱՆԻՆ

ծախվում է դեղատներում և դրօգիստների մօտ Եւրոպայի նշանաւոր քաղաքներում և Կայսրութեան բոլոր քաղաքներում ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏ *գտնվում է* ՎԱՐՇԱՎԱՑՈՒՄ, *հնարողի, դեղատան տիրոջ, ֆարմացիայի մագիստր Վ.* ԿԱՐՊԻՆՍԿՈՒ *մօտ, Էլեկտորալնայա փողոց,* № 39. *Գալմանինի մեծ արկղը արժէ Վարշավայում* 50 *կ., փոքրը* 30 *կոպ.*

ՊԵՏՔ Է ԶԳՈՒՇԱՆԱԼ ԿԵՂԾՈՒՄՆԵՐԻՑ

և պահանջել, որ իւրաքանչիւր արկղը կրէր փոշու գործածութեան բացատրութիւնը և ֆարիզի ցուցահանդիսի մեդալները։

10—10 (Ե)

ԿԱՊԱԼՈՎ

տրվում են ԵՐԵՒԱՆՈՒՄ *գտնվող* „ԶԱՐԱՖԻ“ *և* „ԶՈՒԼՖԻ“ *քարավանսաները։ Պայմանների մասին հարցնել Թիֆլիսում Դվօրցօվայա փողոցի վրա գտնվող* ԴԱԼԱՄԲՐՕՎԻ *մագազինում և* Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԵԱՆ *ապահովութեան ընկերութեան գործակալութեան մէջ։* 14—15

Խոնարհաբար խնդրում եմ այն յարգելի անձանց, որոնք իմ հանգուցեալ ամուսին ԱԼԷՔՍԱՆԴՐ ԱՌԱՐԱՏԵԱՆԻ

„ԳԱՒԱՌԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ“

դրքի համար բաժանորդներ գտնելու նեղութիւնը յանձն էին առել, բարեհաճեն ուղարկել ինձ բաժանորդագիրները, և դրամը, որպէս զի կարող լինենք տպագրելու բաժանորդաց աղերը, որովհետև արդէն տպագրութիւնը աւարտվում է։ Հասցէս. Тифлисъ. Шушаникъ Араратянъ, Ѳоминая ул. № 15 д. Давришева.

Այրի Շուշանիկ Արարատեանց

4—5

Պարապելով մի քանի տարի ուսուցչութեամբ երկդասեան ծխական դպրոցներում և ունենալով ուսուցչական վկայական, ցանկանում եմ դասեր ունենալ ծխական դպրոցներից մինում՝ ռուսաց լեզուով աւանդելի բոլոր առարկաներից, չաբաթական 24—30 *դաս,* 600 *բուբլի ռոճիկով, առանց ճանապարհածախսի։*

Դիմել. БАКУ, Александру Тер-Степаносянцу.

4—5

ՍՈՒԲԲ-ԽԱՋ *քաղաքի հոգևոր միդասեան երկսեռ հայոց դպրոցների համար պէտք է մի* ՈՒՍՈՒՑԻՉ *ռուսաց լեզուի։ Պէտք է դասախօսի միայն լեզուից տղայոց և օրիորդաց դպրոցի երկու բաժանմունքում, շաբաթական* 24 *դաս։ Գրութիւնից* 6 *դաս։ Մի խօսքով պէտք է հաշուել* 24—30 *դաս, տարեկան* 400 *բուբլի ռոճիկով, առանց ոչնչի (այսինքն առանց ճանապարհածախսի, բնակարանի, վառելափայտի և ծառայի)։ Ցանկացողները թող շուտով դիմեն վերոյիշեալ պայմաններով՝ հոգաբարձութեանը։*

1—3

Մի երիտասարդ, որ աւարտել է իր ուսումը Ներսիսեան դպրոցում և ապա ունկնդիր է եղել Դօրպատի համալսարանում, կամենում է հայոց դպրոցներից մէկը մէջ ուսուցչի պաշտօն ունենալ։ Կարող է դաս տալ գիմնազիական բոլոր առարկաների և լեզուները։ 5—5

Дозволено цензурою, Тифлисъ 8 Августа 1888 г.

Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. каз.